

Երևանի Մխրթար Ներացու անվան պետական բժշկական համալսարանը եւ թերապիայի զարգացումը Հայաստանում 75 տարում

Մ. Ներացու անվան ԵՐՊԲՀ-ի ներքին հիվանդությունների
թ.2 ամբիոնի պրոֆեսոր, ակադեմիկոս Ռ. Պ. Սպամբուլյան

375025 Երևան, Կորյունի 2

Հայաստանը, որ դարեր շարունակ ունեցել է իր բժշկության ուրույն և հարուստ պատմությունը, սովետական կարգեր հաստատվելու նախօրեին գտնվում էր ծանր պայմաններում: Բզկտված և արյունաքամ երկրում մոլեգնում էին սովը, խուլերան, տիֆը, պալարախտը, բնական ծաղիկը, մալարիան: Երկիրը լցված էր թուրքական յաթաղանից մազապուրծ եղած, պատերազմի արհավիրքներ տեսած հազարավոր զաղթականներով, որոնք կարիք ունեին ամենօրյա հոգատարության, նյութական և բժշկական օգնության: Մեր ազգային պատմության այդ օրհասական պահին հիթավի անձնագրության և խիզախության օրինակներ մատուցեցին բժիշկները, չնայած քիչ էին նրանք՝ ընդամենը 70 հոգի:

Բժշկության առաջ ծառացած խնդիրների հաղթահարման և առողջապահական կոտ համակարգ ստեղծելու համար հրամայական պահանջ առաջացավ ունենալ սեփական կադրերի պատրաստման դպրոց, առավել ևս, որ ցարական Ռուսաստանի թողած ժառանգությամբ բավարարվել հնարավոր չէր: Այդ նպատակով 1922 թ. Երևանի պետական համալսարանում բացվեց բժշկական ֆակուլտետ, ուր աշխատանքի հրավիրվեցին ակադեմիկոս թերապևտներ Լ. Ա. Հովհաննիսյանը, Ա. Ա. Մելիք-Աղամյանը և Ռ. Մ. Գյանջեցյանը, որոնք անձնվիրաբար ձեռնամուխ եղան ոչ միայն բժշկական կադրերի պատրաստման շնորհակալ գործին, այլև դարձան Հայաստանում թերապևտիկ ծառայության կազմակերպիչներ և հիմնադիրներ: Հետևելով նրանց աշխատանքային գործունեության ընթացքին, հեշտությամբ կարելի է գաղափար կազմել թերապիայի զարգացման հիմնական ուղղությունների և թերապևտիկ դպրոցների աստիճանական ձևավորման պրոցեսի մասին:

Ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյան: Ծնվել է 1885 թ. Թիֆլիս քաղաքում: 1903 թ.՝ վերջացնելով տեղի գիմնազիան, ընդունվել է Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը, որն ավարտել է 1909 թ.:

Աշխատելով Թիֆլիսում, Խարկովում, Ալավերդիում, Երևանում, իսկ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մահ գործող քանակում, մահ է բերում մեծ փորձ, գիտելիքներ ու լայն ճանաչում: Արդեն այդ շրջանում, բացի գործնական բժշկությունից մազապուրծ եղած, պատերազմի զոհերի և զրաբուծական հնարավորությունների ուսումնասիրման և օգտագործման նկատմամբ:

ուղղություններ, միևնույն ժամանակ տեսական ու գործնական առարկաներից քննություններ հանձնում՝ բժշկագիտության դոկտորի գիտական աստիճան ստանալու համար:

Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի հիմնադրումից հետո, 1922 թ. Լևոն Հովհաննիսյանը նշանակվում է ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոնի վարիչ, որը մա անընդմեջ ղեկավարում է շուրջ 40 տարի (մինչև 1960 թ.): 1928 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Անգնահատելի են Լևոն Հովհաննիսյանի ծառայությունները հայ բժշկագիտության զարգացման գործում: Դեռ 1913 թ. լինելով Կովկասի մալարիայի կոմիտեի քարտուղար, մա մեծ գործունեություն է ծավալում այդ հիվանդության ուսումնասիրության ուղղությամբ, հրատարակում է մի շարք աշխատություններ և մշակում կանխարգելման միջոցներ:

Հիմնականում նրա ջանքերով և նախաձեռնությամբ 1923 թ. Երևանում հիմնադրվում է Տրոպիկական ինստիտուտը (հետագայում՝ Մալարիայի և բժշկական պարագիտությունների ինստիտուտ): Լևոն Հովհաննիսյանի և նրա ղեկավարած կոլեկտիվի կողմից այդ տարիներին հրապարակվում են ավելի քան 50 գիտական աշխատանքներ, այդ թվում ատենախառություններ ու մեմորանդումներ, որոնք հիմնականում նվիրված էին մալարիայի կլինիկայի, դասակարգման, բուժման և այդ հիվանդության հետ կապված օրգանիզմում կատարվող կենսաքիմիական տեղաշարժերի հետ առնչվող հարցերին: 1938 թ. ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանը դոցենտ Վ. Ս. Ավագյանի հետ միասին որպես հիվանդաբանական (նոզոլոգիական) նոր միավոր առանձնացրեց և նկարագրեց Հայաստանում տարածված մի հիվանդություն, որը մա անվանեց 6-օրյա տենդ, իսկ հետագայում պարբերական հիվանդություն: Լևոն Հովհաննիսյանը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Հայաստանի հարուստ կլիմայաբուժական և ջրաբուժական հնարավորությունների ուսումնասիրման և օգտագործման նկատմամբ:

Հատկապես մեծ են նրա ծառայությունները Արգմու հանքային ջրերի և առողջարանային պայմանների ուսումնասիրության գործում: Նրա հետազոտությունները ցույց տվեցին, որ Արգմին կարող է համարվել Միության լավագույն սրտաբանական առողջարան-

ներից մեկը:

Հիշատակության արժանի են Լևոն Հովհաննիսյանի հետազոտությունները՝ նվիրված սիրտ-անոթային մկանցների ծագմանը, դասակարգմանը, կլինիկային ու բուժմանը:

Դեռ 1913 թ. Լևոն Հովհաննիսյանն սկսեց զբաղվել հայ բժշկության պատմության հարցերով: Էջմիածնի գրադարանում, ապա Մատենադարանում՝ ուսումնասիրելով հայ բժշկությանը նվիրված ձեռագրերը, ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանը իր ղեկավարած կոլեկտիվի հետ հրապարակեց մի շարք գիտական աշխատություններ, որոնք մեծ չափով նպաստեցին հայ բժշկության մինչ այդ անհայտ գործիչների աշխատանքների համընդհանուր ճանաչմանը: Այդ հարցում անգնահատելի ավանդ էր 1946-47 թթ. ռուսերեն լեզվով լույս տեսած «Բժշկության պատմությունը Հայաստանում» 5-հատորյա մոնումենտալ աշխատությունը:

Ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանը մասնակցական բժշկական տերմինաբանության ստեղծողներից մեկն էր: Նրա նախաձեռնությամբ և մասնակցությամբ 1951 թ. լույս տեսավ «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը»:

Նրա հեղինակությամբ լույս են տեսել բժիշկների և ուսանողների համար խիստ անհրաժեշտ մի շարք դասագրքեր: Ուսերեն և հայերեն լեզուներով հրատարակված՝ «Ներքին հիվանդությունների դիագնոստիկա» (1951 թ.) և «Ներքին հիվանդությունների մասնավոր ախտաբանություն» (1956 թ.) դասագրքերը մինչև այժմ չեն կորցրել իրենց հետաքրքրությունը:

Լ. Հովհաննիսյանը 1937 թ. պաշտպանում է սրտի օրգանական աղմուկների ծագման հարցերին նվիրված դոկտորական թեզը: 1943 թ. ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի, 1944 թվին՝ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, մույն թվականին ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հայ բժշկության և կենսաբանության մասնաճյուղի վարիչ: Ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 8 դոկտորական և ավելի քան 30 թեկնածուական ատենախոսություններ: Նրա գրչին են պատկանում 180 տպագրված աշխատանքներ և 20 մենագրություններ: Նա երկար տարիներ եղել է Թերապևտների համամիութենական գիտական ընկերության և համամիութենական պատմաբժշկական խորհրդի վարչության անդամ, Հայաստանի թերապևտների գիտական ընկերության նախագահ:

Ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի սրտաբանության մասնաճյուղի բազայի վրա ստեղծվեց Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտը, որը 1972 թվականից կրում է նրա անունը:

Լ. Հովհաննիսյանի աշակերտներից սրտաբանու-

թյան բնագավառում ակնառու դեմք էր պրոֆեսոր Վ.Մ. Ավագյանը: Նա բազմակողմանիորեն և մանրակրկիտ հետազոտել է հիպերտոնիկ հիվանդությունը և ստացված արդյունքներն ամփոփել դոկտորական թեզում (նվիրված հիպերտոնիկ հիվանդության տարածվածությանը, ընթացքին, յուրահատկություններին, ինչպես նաև բուժման հարցերին մեր հանրապետության տարածքում):

Լ. Հովհաննիսյանի շնորհալի աշակերտներից է Կ.Ս. Բյանդարյանը, որը երկար տարիներ (1961-1979 թթ.) ղեկավարեց սրտաբանության ինստիտուտը, տալով նրան նոր որակ և ուղղություն:

Բյանդարյանի աշխատանքները նվիրված են սրտի բնածին արատների ռենտգենյան հետազոտությանը: Նա հատկապես նոր խոսք ասաց բժշկության մեջ էրջտեյնի հիվանդության մանրագնահատական հետազոտությամբ:

Առանձնակի պետք է մշել Կ.Գ. Աղամյանի մասին, որը 1979 թվականից գլխավորում է Սրտաբանության ինստիտուտը: Նրա ղեկավարությամբ նոր թափ առան սրտի իշեմիկ հիվանդության, ռևմատիզմի, սրտային անբավարարության, հիպերտոնիկ հիվանդության ժամանակ սրտամկանում առաջացած փոփոխությունների բազմակողմանի և խոր հետազոտությունները: Խիստ կարևոր է Կ.Գ. Աղամյանի գիտական հետազոտությունների մշակակությունը սրտամկանի ինֆարկտի ժամանակ ախտաբանական օջախի մեծության և տարածվածության հարցերում, ինչպես նաև սրտի կծկողական ֆունկցիայի և հատկապես սրտի դիաստոլայի փուլի ուսումնասիրության բնագավառում: Աղամյանը մեծ ուշադրություն է դարձնում երիտասարդ կադրերի պատրաստման գործին:

Ակադեմիկոս Լ. Հովհաննիսյանի մահից հետո (1966թ.) պրոֆեսոր Լ. Բադալյանը գլխավորեց Գ.Հ. Բադալյանը: Իր աշխատանքային գործունեության ընթացքում կարճ ժամանակ աշխատելով պրոֆեսոր Մելիք-Աղամյանի հետ, նրա ղեկավարությամբ Գ.Բադալյանը սկսում է զբաղվել սրտային անբավարարության ժամանակ տարբեր սրտային զլիկոզիդների ազդեցության ուսումնասիրությամբ: Նրա երկարամյա հետազոտություններից պարզվեց, որ ձախ փորքային սուր անբավարարության ժամանակ տեղի են ունենում բրոնխային անցանցիկության խանգարումներ, որոնք զգալիորեն բարդացնում են առանց այն էլ խանգարված արյան փոքր շրջանառությունը: Ելնելով վերոհիշյալից՝ նա առաջարկում է բուժման նոր մեթոդներ: Գ.Հ. Բադալյանի այդ հետազոտություններն ամփոփվել են «Սրտային ասթմա» (1978) մենագրության մեջ:

Գ. Բադալյանի աշխատությունները պարզություն են մտցրել սրտային ասթմայի ախտաճանաչման հարցերում, որը շատ մեծ նշանակություն ունի այդ համախտանիշի բուժման գործում: Նա մեծ լույս ունի

արտաքին շնչառության ուսումնասիրության մեթոդների մշակման բնագավառում: Նրա կողմից մշակված և առաջարկված ցուցանիշը հայտնի է հայրենական դասական գրականության մեջ որպես «Բադալյանի ցուցանիշ»:

Լ. Հովհաննիսյանի աշակերտներից է նաև Ֆ.Ս. Դրամիսյանը, որը աշխատել է նրա հետ 1949 թվականից: Դրամիսյանի հիմնական գիտական հետազոտությունները նվիրված են կլինիկական մեֆրոլոգիայի հարցերին: Երկար տարիների մանրակրկիտ կլինիկական հետազոտություններով նա հիմնավորել է երիկամի էրիթրոպոետինների և ինհիբիտորների դերը երիկամային սակավարյունության ախտածագման հարցում:

Պրոֆեսոր Ա. Ա. Մելիք-Աղամյան: Ծնվել է 1885 թ. Թիֆլիսի նահանգի Շուլավեր (այժմ՝ Շահումյան) գյուղում: 1911 թ. ավարտելով Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը, Արտաշես Մելիք-Աղամյանը աշխատանքի է անցնում պրոֆեսոր Օպենխուսկու ղեկավարած ֆակուլտետային թերապիայի կլինիկայում որպես օրդինատոր: Այնուհետև տեղափոխվում է հոսպիտալ թերապիայի ամբիոն, որտեղ պրոֆեսորներ Գեորգիևսկու և Շատիլովի ղեկավարությամբ աշխատում է որպես ավագ ասիստենտ՝ գործնական պարապմունքներից բացի վարելով նաև ներքին ախտաբանության առանձին բաժինների և կլինիկական ռեցեպտուրայի ինքնուրույն դասընթացներ:

Ուկրաինայում սովետական կարգերի հաստատումից հետո Ա.Մելիք-Աղամյանն ակտիվորեն մասնակցում է երիտասարդ հանրապետության առողջապահության կազմակերպման գործին, զբաղեցնելով մի շարք պատասխանատու պաշտոններ: Խարկովի բժշկական ինստիտուտում աշխատելու 11 տարիների ընթացքում Ա. Մելիք-Աղամյանը ձեռք է բերում տաղանդավոր թերապևտի, գիտնականի և մանկավարժի համարում: 1925թ. նա հրավիրվում է Երևան և, ստանձնելով ֆակուլտետային թերապիայի ամբիոնի վարիչի պաշտոնը, մեծ ոգևորությամբ ու եռանդով սկսում է զբաղվել բժշկական որակյալ կադրեր պատրաստելու գործով: 1928 թ. Ա. Մելիք-Աղամյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1937 թ. նա հաջողությամբ պաշտպանում է հիպերտոնիայի հարցերին նվիրված դոկտորական թեզը:

Լինելով ժամանակի լավագույն կլինիցիստներից մեկը պրոֆեսոր Մելիք-Աղամյանը մեծ վաստակ ունի նաև հանրապետության բժշկական գիտության զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում: Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում արյան շրջանառության օրգանների հիվանդությունների ուսումնասիրությանը, մասնավորապես պսակային արյան շրջանառությանը և հիպերտոնիկ համախտանիշին նվիրված նրա աշխատությունները:

Մեծ է նրա ներդրումը ինչպես մալարիայի, այնպես

և ռևմատիզմի հետազոտություններում: Առաջինը Հայաստանում նա է զբաղվել ներգատաբանության (էնդոկրինոլոգիայի) հարցերով:

Նշանակալի են պրոֆեսոր Ա.Մելիք-Աղամյանի ծառայությունները Հայաստանի առողջաբանային առկա պաշարների գիտական ուսումնասիրման, հիմնավորման և կիրառման գործում: Նրա ակտիվ մասնակցությամբ առաջին անգամ ուսումնասիրվեցին Սևանի, Արագածի, Ստեփանավանի, Գյուլագարակի կլիմայական և առողջաբանային պայմանները:

Գիտական բեղմնավոր գործունեությունից բացի, նա զբաղվել է նաև կադրերի պատրաստման հարցով, մեծ ուշադրություն դարձնելով նրանց ստեղծագործական, գիտական և գործնական պատրաստության բարձրացմանը:

Նշանավոր կլինիցիստ-թերապևտ, գիտության վաստակավոր գործիչ Ա. Մելիք-Աղամյանը բազմիցս ընտրվել է Թերապևտների համամիութենական ընկերության վարչության և Համամիութենական գիտական առողջաբանային խորհրդի անդամ, Հանրապետության գիտական բժշկական ընկերության և Ռևմատիզմի կոմիտեի նախագահ, «Կլինիկական բժշկության» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, Հայկական ՄՍՀ Գերագույն Սովետի դեպուտատ:

1932 թվականից պրոֆ. Մելիք-Աղամյանի հետ է աշխատել Ա.Ա. Քաթանյանը, որը նրա ղեկավարությամբ շարքային բժշկից հասավ գիտությունների դոկտորի աստիճանի և երկար տարիներ վարում էր բժիշկների կատարելագործման ինստիտուտի թերապիայի ամբիոնը: Ա.Ա.Քաթանյանը հանգամանորեն ուսումնասիրել է անոթների վիճակը մալարիայի ժամանակ: Նա միևնույն ժամանակ զբաղվել է հիպերտոնիկ հիվանդության, աթերոսկլերոզի, պսակային անբավարարության հարցերով, որոնց շուրջ արժեքավոր գեկուցումներով բազմիցս հանդես է եկել միութենական և միջազգային մի շարք բժշկական գիտաժողովներում:

1945 թվականից Մելիք-Աղամյանին է աշակերտել Պ.Ա. Վարդապետյանը, որը հիմնականում նվիրվել է ներգատական հիվանդությունների ուսումնասիրությանը: Հատկապես մեծ ավանդ ունի Պ.Ա. Վարդապետյանը Հայաստանում էնդոկրինոլոգիական ծառայություն ստեղծելու և զարգացնելու գործում: Լինելով առողջապահության մինիստրության գլխավոր էնդոկրինոլոգը և էնդոկրինոլոգիական գիտական ընկերության նախագահը, նա մեծ դեր է խաղացել բարձրորակ կադրեր պատրաստելու գործում, ինչպես նաև ներդրել է ներգատական հիվանդությունների հետազոտության և բուժման նոր արժեքավոր մեթոդներ: Նա մասնակցել է 1941-1945թթ. Հայրենական պատերազմին և պարգևատրվել շքանշաններով: 1949-1952թթ. լինելով Հոկտեմբերյանի շրջանի առողջապահության բաժնի վարիչ, ակտիվորեն մասնակցել է այն ժամանակ մոլեկուլ մալարիայի և տրախտմայի

վերացման գործին:

1949 թ. Մելիք-Արամյանի մահից հետո ֆակուլտետային թերապիայի ամբիոնի վարիչ է ընտրվում պրոֆ. Տ.Ս. Մնացականովը, որի ղեկավարությամբ ամբիոնը շարունակում է Մելիք-Արամյանի սկսած գործը: Ջերմուկ ատոլոգարանի ուսումնասիրությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում «Ջերմուկ» հանքային ջրի ազդեցությանը նյութափոխանակության վրա լյարդի, լեղուղիների հիվանդությունների և շաքարախտի ժամանակ: Նրա օրոք ֆակուլտետային թերապիայի կլինիկայում լուրջ հետազոտություններ են կատարվել քիթետոքսիկոզի և շաքարախտի ուսումնասիրության գործին: Պրոֆեսոր Մնացականովն ամենօրյա հոգատարություն էր ցուցաբերում կադրերի պատրաստման գործին:

Նրա լավագույն աշակերտներից է Ռ.Ս. Մամիկոնյանը, որը մեծ լուրս է ներդրել երիկամային հիվանդությունների ուսումնասիրության բնագավառում: Ռ.Ս. Մամիկոնյանի բեղմնավոր գիտական գործունեության արդյունքներն ամփոփվեցին թեկնածուական (1955 թ.) և դոկտորական (1967 թ.) թեզերում:

Սկսած 1968 թ. Ռ.Ս. Մամիկոնյանը ղեկավարում էր ֆակուլտետային թերապիայի ամբիոնը: Այդ տարիներին նա ամբիոնի աշխատակիցների հետ զբաղվում էր սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների, երիկամային անբավարարության ժամանակ լյարդի ֆունկցիոնալ տեղաշարժերի, երիկամների խրոնիկական անբավարարության կլինիկայի և բուժման հարցերով:

Ռ.Ս. Մամիկոնյանը լինելով փորձված կլինիցիստ, միաժամանակ աչքի է ընկնում իր բազմակողմանի զարգացմամբ և մտքի ստեղծագործական թռիչքով: Ունենալով մաթեմատիկական և տեխնիկական լավ պատրաստություն, նա մի քանի արժեքավոր գյուտեր է արել, որոնք ներդրվել են ուսումնական և կլինիկական պրակտիկայում:

Տ.Ա.Մնացականովի աշակերտներից էր նաև Վ.Գ. Ամատունին, որը զբաղվել է թոքերի խրոնիկական ոչ սպեցիֆիկ հիվանդությունների տարածվածության և բուժման հարցերի ուսումնասիրությամբ: Պրոֆեսոր Վ.Գ. Ամատունու արժեքավոր հետազոտությունները վերաբերվում են արտաքին շնչառության ֆունկցիայի փոփոխություններին նշված հիվանդությունների ժամանակ և այդ հիվանդությունների դասակարգմանը: Իր աշխատակիցների հետ միասին տարիներ ի վեր ուսումնասիրվել է բրոնխալիմբոսի ասթմայի և խրոնիկական բրոնխիտների ախտածագման ու բուժման հետ կապված հարցերը «Ջերմուկ» ատոլոգարանում: Նրա ուսումնասիրությունները ամփոփված են «Ժողովրդի խրոնիկական օբստրուկտիվ հիվանդությունները և բարձր լեռնային կլիման» (1974 թ.), ինչպես նաև «Ալերգիա» (1985 թ.) մենագրություններում:

Պրոֆեսոր Ռ.Ս. Գյանջեգյան: Հայկական գիտական թերապիայի հիմնադիրներից է նաև կլինիցիստ Ռ.Ս. Գյանջեգյանը: Նա ծնվել է 1885 թ. Նուխի քաղաքում:

Ավարտելով Շուշի քաղաքի ծխական դպրոցը, մեկնում է Ֆրանսիա, որտեղ ընդունվում է Մոնպելիեի համալսարանի բժշկական ֆակուլտետը:

1913 թ. ավարտելով, վերադառնում է հայրենիք և անցնում աշխատանքի Բաքվի հիվանդանոցներից մեկում որպես օրդինատոր: Հետագայում, աշխատելով Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի, Լենինգրադի տարբեր բուժական հիմնարկներում, նա մասնագիտանում է թոքերի պարախտի գծով և կարճ ժամանակից հետո դառնում է ոչ միայն Անդրկովկասի, այլև Միության ճանաչված մասնագետներից մեկը: Այնուհետև նրան հրավիրում և նշանակում են Անդրկովկասի երկաթգծի հարավային տեղամասի ատոլոգապահության բաժնի վարիչ: Այստեղ Գյանջեգյանի ակտիվ մասնակցությամբ հիմնադրվում է Ալեքսանդրապոլի երկաթգծի հիվանդանոցը, որտեղ նա վարում է ներքին հիվանդությունների բաժանմունքը:

Տաղանդավոր բժիշկը շուտով 1930 թ. հրավիրվում է աշխատելու Երևանի բժշկական ինստիտուտում: Սկզբում աշխատում է որպես ասիստենտ, ապա՝ հոսպիտալ թերապիայի ամբիոնի վարիչ, որը նա ղեկավարեց շուրջ 20 տարի: Նույն թվականին (1930) նրան շնորհվում է գիտության վաստակավոր գործչի և պրոֆեսորի կոչում:

Բժշկական ինստիտուտում աշխատելու տարիներին ավելի ցայտուն կերպով դրսևորվեցին պրոֆեսոր Գյանջեգյանի կազմակերպչական, կլինիկական ու գիտական արտասովոր ունակությունները: Ռ.Ս. Գյանջեգյանը խոշոր ծառայություն ունի հանրապետության ատոլոգարանային վարիչների և հանքային աղբյուրների հայտնաբերման և նրանց բուժիչ հատկությունների ուսումնասիրման շնորհակալ գործում: Նրա անվան հետ և կապված Արգմու հանքային աղբյուրների բուժական հատկությունների բացահայտումը ստամոքս-աղիքային հիվանդությունների բուժման համար:

Ամուսնալի է Գյանջեգյանի դերը Գյուլագարակի և Կիրովականի կլինիկական պայմանների բուժական ազդեցության ուսումնասիրման մեջ: Նրա գործունեության հետ սերտորեն կապված է հակապարախտային ծառայության կազմակերպումը Հայաստանում: Գյանջեգյանի գործուն մասնակցությամբ և եռանդուն ջանքերով 1927 թ. Դիլիջանում ստեղծվեց հակապարախտային դիսպանսեր, իսկ այնուհետև՝ ատոլոգարան, որն այժմ կրում է նրա անունը:

Գյանջեգյանը ամենայն խորությամբ ուսումնասիրում է Դիլիջանի կլինիկական ատոլոգարանի ազդեցությունը և մշակում կլինիկաբուժական մեթոդները հատկապես թոքային հիվանդությունների ժամանակ: Նա բացահայտում է նաև «Դիլիջան» հանքային ջրի բուժական հատկությունները և նրա բարերար ներգործությունը ստամոքս-աղիքային հիվանդությունների բուժման գործում:

Մեծ գիտնականի աչքից տառացիորեն ոչինչ չէր վրիպում, հատկապես, երբ դա վերաբերվում էր մարդու ատոլոգիային պահպանմանը: Իսկ այդ ամենն ուղղակիորեն հաստատող փաստեր շատ կան: Մեծ արժեք են

ներկայացնում նրա գիտական և գործնական հետազոտությունները՝ նվիրված պալարախտի, մալարիայի, խոցային հիվանդության, ավիտամինոզների և բիոցենոզի կլինիկայի և բուժման հարցերին: Ռ.Մ. Գյանջեցյանի ղեկավարությամբ և մասնակցությամբ Կիրովականում և նրա շրջակա գյուղերում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին մշակել պալարի կոնկրետ միջոցառումներ այդ շրջանում բավականին տարածում գտած էնդեմիկ խայիպի դեմ: Պարզվեց, որ պատճառը խմելու ջրում պարունակվող յոդի պակասությունն է: Անհրաժեշտ էր գործնականորեն օգնել մարդկանց, և նա հասավ այն բանին, որ Կիրովականում օգտագործվող կերակրի աղը պարբերաբար հարստացվեց կալիումական յոդով՝ դրանով իսկ կանխվեց հիվանդության հետագա զարգացումը: Այնուհետև նա զբաղվում է քիմիական գործարաններում աշխատող բանվորների առողջական վիճակի հետազոտությամբ և մշակում մի շարք մասնագիտական հիվանդությունների կանխման կոնկրետ միջոցառումների ծրագիր: Նա նաև առաջ քաշեց հատուկ ինստիտուտի կազմակերպման անհրաժեշտությունը: Այժմ մեր հանրապետությունում այդ կարևոր հարցերով զբաղվում է Մասնագիտական ախտաբանության գիտահետազոտական ինստիտուտը, և թերևս շատ քչերը գիտեն, որ այդ ծառայության հիմնադիրը եղել է Ռ.Մ. Գյանջեցյանը:

Առաջադեմ հայացքների տեր գիտնականը նաև, այսպես կոչված, «նկրիզմի» ամենաջերմ կողմնակիցն էր: Ահա թե ինչու հանրապետությունում առաջին անգամ նա կիրառեց խոցային հիվանդության բուժումը բրոմի պատրաստուկներով և քնով:

Լինելով փորձված և առաջավոր գիտնական, կլինիցիստ, պրոֆեսոր Գյանջեցյանը շատ բանով նպաստեց գործնական բժշկության մեջ ախտորոշման և բուժման նոր մեթոդների ներդրմանը, մասնակցություն էր ցուցաբերում հանրապետության հասարակական կյանքին: Նա երեք անգամ ընտրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն Սովետի ղեկավար, եղել է Բժշկական ինստիտուտի ռեկտոր, թերապևտների գիտական ընկերության նախագահ, հանրապետության գլխավոր թերապևտ:

Պրոֆեսոր Գյանջեցյանի մահից հետո հոսպիտալ թերապիայի ամբիոնի վարիչ է ընտրվում պրոֆեսոր Ա.Տ. Սիմոնյանը: Տարիներ շարունակ նա զբաղվել է մալարիայի ժամանակ տեղի ունեցող նյութափոխանակության զանազան խանգարումների ուսումնասիրությամբ, որի արդյունքներն ամփոփված են «Նյութափոխանակությունը մալարիայի ժամանակ» աշխատության մեջ: Ուշագրավ են Ա.Տ. Սիմոնյանի և նրա աշխատակիցների հետազոտությունները նոր դեղամիջոցների (սինթեզված Նուրբ օրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտում) կլինիկական փորձարկման ասպարեզում:

Պրոֆեսոր Գյանջեցյանի աշակերտներից էր Ալ.Ա.

Մելիք-Աղամյանը (պրոֆեսոր Ա.Ա. Մելիք-Աղամյանի որդին), որը 1971-1975 թթ. վարում էր բժշկների կատարելագործման ինստիտուտի թերապիայի ամբիոնը: Տարիներ ի վեր զբաղվում էր թոք-սրտային անբավարարության հարցերով: Մանրամասն վերլուծելով էլեկտրասրտագրի շեղումները թոք-սրտային անբավարարության ժամանակ, նա եկավ այն եզրակացության, որ ելնելով այդ շեղումներից, կարելի է որոշել թոք-սրտային անբավարարության արտահայտվածության աստիճանը:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ամփոփող և պարբերական հիվանդության վերաբերյալ Ա.Ա. Այվազյանի երկարամյա հետազոտությունները, որոնք ամփոփված են նրա դոկտորական թեզում: Պրոֆեսոր Այվազյանը, ղեկավարելով հոսպիտալ թերապիայի ամբիոնը, նրան կից ստեղծում է հատուկ գիտահետազոտական լաբորատորիա, որը զբաղվում է պարբերական հիվանդության և կուլագենոզների ուսումնասիրությամբ: Նա առաջարկել է պարբերական հիվանդության նոր դասակարգում, ապա հատուկ հետազոտությունների տվյալների հիման վրա առաջ քաշել պարբերական հիվանդության ախտաձևային իր ուրույն տեսությունը, որտեղ մեծ նշանակություն է տալիս հիվանդության զարգացման ալերգիկ և իմունաբանական մեխանիզմներին: Նրա ջանքերով ստեղծվել է պարբերական հիվանդության և կուլագենոզների բաժանմունք, որը փաստորեն հանդիսանում է հատուկ կենտրոն այդ հիվանդություններով տառապողների հետազոտման և բուժման համար:

Պրոֆեսոր Գյանջեցյանի թերապիայի դպրոցի ավանդույթների շարունակողն ու արգասնողը պրոֆեսոր Ռ.Պ. Ստամբոլցյանն է: Նրա վաղ շրջանի գիտական աշխատանքները վերաբերվում են քնաբուժությանը: Նա մշակել է դեղորայքային քնի արդյունավետությունը բարձրացնող տարբերակիչ մեթոդ, ինչպես նաև ստեղծել է (տեխնիկայի բնագավառում աշխատողների հետ համատեղ) էլեկտրաքնի ինքնատիպ սարք: Այս թեմայով 1952 թ. պաշտպանում է թեկնածուական թեզ, իսկ 1953 թ. պրոֆեսոր Գյանջեցյանի համահեղինակությամբ լույս ընծայում «Խոցային հիվանդության քնով բուժելու մեթոդիկայի մասին» մեմորանդումը: Ստամբոլցյանի հետագա գիտական գործունեությունը վերաբերվում է սրտաբանությանը: Նա առաջինը Հայաստանում լայն կերպով ներդրում է էլեկտրասրտագրությունը և պատրաստում մեծ թվով բարձրորակ կադրեր, որոնք զգալի կերպով նպաստում են սրտաբանության հետագա զարգացմանը:

1957 թ. առաջին անգամ մայրենի լեզվով լույս է տեսնում Ստամբոլցյանի «Օգնություն էլեկտրասրտագրություն ուսումնասիրողներին» ձեռնարկը, որը մեծ նշանակություն ունեցավ հայ բժշկներին քննության այս մեթոդին ծանոթացնելու գործում: Նրա հետագա գիտական աշխատանքները նվիրված են սրտի իշեմիկ հիվանդության ախտորոշման և բուժման հա-

մակողմանի ուսումնասիրություններին: 1962թ. նա պաշտպանում է դոկտորական թեզ, ապա հրատարակում «Կորոնար անբավարարության պարզեցնելի բուժման մասին» մեմագրությունը: 1963 թ. նա կազմակերպում և վարում է Երևանի բժշկական ինստիտուտի սանիտարական, ստոմատոլոգիական և մանկաբուժության ֆակուլտետների ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոնը:

1865թ. Ստամբուլյանը առաջարկում է էլեկտրասրտագրի քանակական վերլուծության իր ուրույն ինտեգրալ մեթոդը, որը նոր հնարավորություններ ու հեռանկարներ է ստեղծում սրտաբանության հետազոտության համար: Այն կարևոր է հատկապես սրտի իշեմիկ հիվանդության վաղ ախտորոշման, բարդությունների կանխման և էլեկտրասրտագրական պարբերական քննություններով տարբերակված բուժման արդյունավետ մեթոդների ընտրության և նրանց կարգավորման գործում: Կլինիկաէլեկտրասրտագրական պարբերական քննություններով ստացված քանակական փոփոխությունների վերլուծության տվյալները Ստամբուլյանին հնարավորություն են տվել առաջարկելու սրտամկանի ինֆարկտի ժամանակ նոր օջախների առաջացման տեսությունը, որը նոր էջ բացեց այդ հիվանդության ախտաճանաչման և տեսանկյունով ուսումնասիրելու, մեկնաբանելու և բուժման նոր մեթոդներ կիրառելու հարցերում:

Այս բոլորը հիմք են տվել էլեկտրասրտագրության բնագավառում մշակել և առաջարկել մի քանի քանակական ցուցանիշներ, ներդրել դիմադիկ էլեկտրասրտագրության միանգամայն նոր և արժեքավոր մեթոդ, որով հաջողվում է որոշել ոչ միայն սրտամկանի ինֆարկտի ընթացքի առանձնահատկությունները, կանխագուշակել և զմախատել հիվանդության ընթացքը, այլև, ժամանակին կարգավորել բուժական միջոցառումները: Վերոհիշյալ հետազոտությունները հնարավորություն են տվել միանգամայն նորովի կիրառել հաշվիչ տեխնիկան էլեկտրասրտագրի ավտոմատիկ վերլուծության բնագավառում: Այդ նպատակով 1968 թ. Ստամբուլյանի նախաձեռնությամբ ստեղծվում է գիտահետազոտական լաբորատորիա, որին աշխատակցում են տեխնիկական գիտությունների ներկայացուցիչներ:

Ռ.Պ. Ստամբուլյանի ջանքերով Երևանի տեխնոլոգիական միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական ինստիտուտում կազմակերպվեց բժշկական էլեկտրոնիկայի բաժին, որտեղ մշակվում և ստեղծվում էին սրտի գործունեությանը հետևող նոր սարքեր և համակարգեր: Դա հիմք ստեղծեց սրտաբանության մեջ նոր ուղղության մոնիտորակոմպյուտերային դիմադիկ էլեկտրասրտագրության զարգացման համար: Այս բնագավառում կատարված հետազոտության արդյունքներն ամփոփվեցին ռուսերեն լեզվով հրատարակված «էլեկտրասրտագրի քանակական վերլուծության մակերեսաչափական մեթոդը» մեմագրությունում:

Ստամբուլյանի 1978 թ. լույս տեսած «Էլինիկական էլեկտրասրտագրություն» մայրենի լեզվով դասագիրքը

1980 թ. արժանացավ Հայկական ՄՍՀ պետական մրցանակի: 1967 թ. Ռ.Պ. Ստամբուլյանին շնորհվում է Հայկ. ՄՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում, իսկ 1971 թ. նա ընտրվում է Հայկ. ՄՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ:

1966-1968 թթ. Ռ.Պ.Ստամբուլյանը նշանակվում է Բժշկական ինստիտուտի ռեկտոր, որի եռանդուն ջանքերի շնորհիվ իրականացվում է ինստիտուտի երկու մասնաշենքերի շինարարությունը:

1970 թ. Ստամբուլյանի կողմից ստեղծվում է ներքին հիվանդությունների սուբօրդինատորների նոր ամբիոնը, իսկ 1980 թ. այն վերափոխվում է որպես ներքին հիվանդությունների թ.2 ամբիոն:

Նրա ջանքերով 1970 թ. նորակառույց Հանրապետական հիվանդանոցում ստեղծվում է հանրապետությունում առաջին մասնագիտացված սրտաբանական կլինիկան սրտամկանի ինֆարկտի ինտենսիվ հսկողության բաժանմունքով, որտեղ առաջին անգամ կիրառվեց և հիմնադրվեց սրտի ռիթմի խանգարումների էլեկտրաիմպուլսային թերապիան ռոգենտ Հ.Կ.Կարապետյանի կողմից:

1971թ. Ռ.Պ.Ստամբուլյանը ընտրվում է Հայաստանի ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1994թ. ակադեմիկոս: Ակադեմիկոս Ստամբուլյանը շարունակում է իր գործունեությունը. նույն ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 25 թեկնածուական և 2 դոկտորական թեզեր: Նրա գրչին են պատկանում մոտ 200 գիտական հոդվածներ, 3 մեմագրություն և 4 դասագիրք: Նրա խմբագրությամբ 1988 թ. լույս է տեսնում Հայաստանում առաջին ներքին հիվանդությունների 2 հատորյա դասագիրքը: Նա 8 գյուտի հեղինակ է և շարունակում է իր գիտատեսական ակտիվ գործունեությունը մինչ օրս: Պարգևատրվել է շքանշաններով, մեդալներով և պատվոգրերով:

1987 թ.-ից ներքին հիվանդությունների թ.2 ամբիոնի վարիչ է ընտրվում նշանավոր գիտնական, բ.գ.դ. պրոֆեսոր Վ.Մ.Հարությունյանը, որը բազմաթիվ արժեքավոր գիտական աշխատությունների և մեմագրությունների հեղինակ է՝ հատկապես պարբերական հիվանդության բնագավառում: 2001 թ. նույն ամբիոնի վարիչ է ընտրվում հմուտ սրտաբան, բ.գ.դ., պրոֆեսոր Ե.Ս.Միքայելյանը:

Այսպիսով, Երևանի բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների ամբիոնները հանդիսացել են այն գիտատեսական կենտրոնները, որտեղ պատրաստվել են բազմաթիվ բժիշկ-թերապևտներ, որոնք հաջողությամբ ապահովում են հանրապետության թերապևտիկ ծառայությունը:

Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում սովորելու են գալիս սփյուռքի հայ երիտասարդները, որոնք իրենց բժշկական գործունեությունը իրագործում են արտասահմանում: Ուրախությամբ պետք է նշել, որ Երևանի պետական բժշկական համալսարանում սփյուռքահայ շատ բժիշկ-թերապևտներ արտասահմանում վայելում են մեծ հեղինակություն: